

## Լուսինե Հայրապետովա

### ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐ ՓԱՇԱՍ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

Բանալի բառեր- ազգային պատվիրակություն, բարենորոգումներ, Հայկական հարց, խաղաղության վեհաժողով, կոնդակ, պատրիարքարան:

Իր բազմադարյան պատմության ընթացքում գոյատևման, սոցիալական ու ազգային ազատագրության, ապագայի համար մաքառումների դաժան ուղի է անցել հայ ժողովուրդը: Եվ այդ մաքառումների ճանապարհին էլ ծագել է Հայկական հարցը, որի ամենաճակատագրական փուլերից մեկի հետ է կապված Պողոս Նուբարի անունը: Հարկ է նշել, որ նրա անվան հետ է կապված նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադրումը:

Պողոս Նուբարի անունը համահայկական հնչեղություն ստացավ 1912թ.-ից, երբ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե. Սուրենյանցը նրան նշանակեց Ազգային պատվիրակության ղեկավար՝ Եվրոպական տերությունների մոտ հայկական բարենորոգումների խնդիրը բարձրացնելու համար: Պ. Նուբարը կրթված էր, ուներ մեծ կապեր<sup>1</sup>: Բացի այդ, լինելով Եգիպտաբնակ՝ նա Օսմանյան կայսրության հպատակ էր, պաշտպանում էր թուրքահայերի շահերը, թուրքերը նրա վրա ճնշում չէին կարող գործադրել, քանի որ նրանց ազդեցությունը Եգիպտոսի վրա ձևական էր<sup>2</sup>:

Նրա թեկնածությունը ձեռնտու էր հայկական բոլոր հոսանքներին. նա չէր պատկանում կամ համակրում որևէ կուսակցության: Բացի այդ, մեծ վստահություն ու հարգանք էր վայելում որպես բարերար, հատկապես Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադրումից (1906թ.) հետո, որը օրեցօր բարգավաճում էր: Պ. Նուբարն ի տարբերություն նախորդ հայ դիվանագետների Եվրոպայի առջև հայերին չէր ներկայացնում խեղճ ու կրակ, օգնության կարոտ թույլ ժողովուրդ, այլ փորձում էր Հայկական հարցը բարձրացնել Եվրոպայի շահերի տեսանկյունից:

1912թ. նոյեմբերի 10-ին Գևորգ Ե կաթողիկոսը կոնդակ ուղարկեց Պ. Նուբարին՝ խնդրելով մեկնել վեհաժողով (կոնֆերանս) և Եվրոպական պետությունների պատգամավորների առաջ բարձրացնել հայոց խնդիրը<sup>3</sup>:

Հարկ է նշել, որ մինչև կաթողիկոսի կոնդակը ստանալը, նրա կինը՝ Մարի Նուբարը, խնդրեց, որպեսզի Պ. Նուբարը, օգտվելով քաղաքական շրջանակներում ունեցած իր ընդարձակ կապերից, Լոդոնի կոնֆերանսում բարձրացնի հայրենակիցների

<sup>1</sup> Տես Պողոսյան Ս., Պողոս Նուբար փաշա, Ազգային գործիչ, Երևան, 2004, էջ 38:

<sup>2</sup> Տես նույն տեղում, էջ 45:

<sup>3</sup> Տես նույն տեղում, էջ 46:

խնդիրները և դրանց համար լուծում պահանջի: Իսկ հոկտեմբերի 17-ին Եգիպտահայ մի խումբ գործիչներ նրան նամակով առաջարկեցին հանրիպել Ֆրանսիայի վարչապետ Պուանկարեին և բարձրացնել Յայկական հարցը<sup>1</sup>: Նուբարը դեմ չէր հարցը բարձրացնելուն, սակայն անպատճի համարեց խոսել և գործել հայ ժողովրդի անունից, քանի որ որևէ լիազորություն չուներ: Մեկնումից մի քանի օր առաջ Մարի Նուբարը կրկին խոսք բացեց այդ մասին և ցավ հայտնեց հայերի տառապանքներին վերջ տալու լավագույն առիթը բաց թողնելու համար:

Պ. Նուբարը կաթողիկոսական կոնդակը ստացավ դեկտեմբերի 2-ին Փարիզում, որին արձագանքեց մեծ ուրախությամբ<sup>2</sup>: Նախ նա ձեռնամուխ եղավ պատվիրակության կազմակերպմանը:

Յունվարի 1-ին կաթողիկոսին ուղարկած նամակում նա գրում է, որ մտադիր է պատվիրակությունը կազմել միայն արևմտահայերից, որպեսզի դժվարություններ չառաջանան: Ուստանամի հետ կապված՝ Պ. Նուբարը կաթողիկոսին առաջարկեց պատվիրակության անդամներ նշանակել Եվրոպայի թեմի առջնորդ Գևորգ Եպիսկոպոս Ութունյանին, Եվրոպայի գիտական շրջանակներում ճանաչված լեզվաբան, հնագետ Յաղութ Արքին փաշային, իրավաբան Յարություն Մոստիչյանին և հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, բանաստեղծ Մինաս Չերազին<sup>3</sup>:

1913թ. հունվարի 5-ին Նուբարին ուղարկած նամակում կաթողիկոսը հավանություն տվեց վերոնշյալ անձանց պատվիրակության անդամներ նշանակելուն: Յունվարի 27-ին Նուբարը շրջաբերականով տեղեկացրեց պատվիրակության կազմավորման մասին<sup>4</sup>:

Պ. Նուբարը անմիջապես գործնական քայլեր կատարեց Եվրոպայում հասարակական կարծիքը ի նպաստ հայկական բարենորոգումների տրամադրելու և պետական անձնավորությունների տեսակետները պարզելու ուղղությամբ: Այդ հարցում նրան օգնեցին անձնական ծանոթությունները: Վահրամ Փափազյանը գրում է, որ Պ. Նուբարը շատ հարգված անձ էր, իսկ նրա կապերը «Եվրոպական հանրային և քաղաքական շրջանակներուն հետ մտերիմ և անբռնազբօսիկ էին»: Նրա մասին բարձր կարծիքի էր անձամբ Ֆրանսիայի նախագահ Ռ. Պուանկարեն: 1913թ. հունվարին մի խոսակցության ժամանակ վերջինս նշեց, որ Պ. Նուբարը մեկն է «այն սակաւաթիւ անձերէն, որոնք բարձրագոյն բարոյական կը միացնեն շատ մեծ իմացականութեան մը»<sup>5</sup>:

<sup>1</sup> Տես Ղամբարյան Ա., Յայկական հարցը 1912-1914 թվականներին և Մեծ Բրիտանիան, Երևան, 2006, էջ 24:

<sup>2</sup> Տես Պողոսյան Ս., նշվ. աշխ., էջ 45

<sup>3</sup> Տես Պողոսյան Ս., նշվ. աշխ., էջ 41

<sup>4</sup> Տես նույն տեղում, էջ 45:

<sup>5</sup> Տես Փափազյան Վ., իմ հուշերը, հ 2, Պեյրութ, 1952, էջ 224:

Եվրոպայում Պ. Նուբարի գործունեությունը և Ռուսաստանի շահագրգռությունը Հայկական հարցում խիստ անհանգստացրեց թուրքերին: Նրանք փորձեցին կանխել պետությունների միջամտությունը և գերմանական կառավարության խորհրդով դեռևս 1912 թ. դեկտեմբերին հանդես եկան բարենորոգումների 21 կետից բաղկացած ծրագրով, որը ներառում էր սոսկ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի նահանգները՝ բացառելով Սեբաստիայի և Էրզրումի նահանգները: Թուրքական «նախագիծը» մի կատարյալ աչքակապություն էր: Բնականաբար, հայկական կողմը չէր կարող այն ընդունել, քանի որ նրանում շրջանցված էին հայկական բարենորոգումների բուն նպատակն ու իրագործման պայմանները: Ավելին, Պ. Նուբարը նշեց, որ Թուրքիան չի կարող մերժել Եվրոպական վերահսկողությունը հայկական բարենորոգումների նկատմամբ, քանի որ դա հանձն է առել Բեռլինի վեհաժողովի պայմանագրի 61-րդ հոդվածով, իսկ բարենորոգումների հիմքում պետք է դրվի 1895թ. Մայիսյան ծրագիրը, որը վավերացվել էր նաև սուլթանի կողմից: Նա նաև մերժեց Թուրքիայի արտգործնախարար Գ. Նորատունկյանի հրավերը՝ մեկնելու Կ. Պոլիս և բանակցելու քյամիլ փաշայի կառավարության հետ<sup>1</sup>:

Պ. Նուբարը համոզված էր, որ թուրքերը փորձում են ժամանակ շահել և խուսափել բարենորոգումներ կատարելուց, սակայն գտնում էր, որ չպետք է ամբողջովին խցեն հարաբերությունները թուրքերի հետ, քանի որ բարենորոգումներն առանց Թուրքիայի համաձայնության չեն կարող իրականացվել: Նա անհրաժեշտ էր համարում թուրքերին համոզել, որ բարենորոգումները ոչ թե վնասում են կայսրությանը, այլ բխում են նրա շահերից:

Պ. Նուբարը ձեռնամուխ եղավ կազմելու բարենորոգումների ծրագիր՝ ներկայացնելու Լոնդոնի կոնֆերանսին կամ Եվրոպական կառավարություններին: Նրանից անկախ՝ բարենորոգումների ծրագիր կազմեց նաև Կ.Պոլսի պատրիարքարանը<sup>2</sup>:

Շուտով պարզ դարձավ, որ խոշոր տարբերություններ կան պատվիրակության և պատրիարքարանի կազմած ծրագրերի միջև: Պատրիարքարանի ծրագիրը նախատեսում էր ավելի ընդարձակ բարենորոգումներ և դրանց գործադրման իրական երաշխիքներ, նպատակ ուներ նախադրյալներ ստեղծել հետագայում Հայաստանի ինքնավարության հռչակման համար: Ըստ դրա՝ բարենորոգումների վերահսկողությունը հանձնարարվելու էր տերություններից որևէ մեկին:

Նուբարը գտնում էր, որ պատրիարքարանի ծրագիրն ավելի շատ հիմնված էր ինքնուրույնության սկզբունքի վրա, որը այդքան էլ բարեպատեհ և գործնական չէր: Նա

<sup>1</sup> Տես Հայ ժողովրդի պատմություն, հատ. 6 (ԳԱ հրատ.), էջ 527:

<sup>2</sup> Տես Փափազյան Վ., նշվ. աշխ., էջ 583:

ընդունում էր, որ ավելի արդյունավետ կլինի, եթե բարենորոգումների վերահսկողությունը ստանձնի մեկ պետություն. սակայն անհրաժեշտ էր համարում, որ այդ պետությունը պահանջի իրեն հանձնել վերահսկողությունը, որից հետո պատվիրակությունը կպաշտպաներ այդ քայլը: Նուբարի ծրագիրը հիմնված էր Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի և 1895թ. Մայիսյան հուշագրի վրա, որը կազմել էին Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան և հավանություն էին տվել Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Իտալիան: Այն, ինչպես ասվել է, վավերացվել էր սուլթանի կողմից: Պ. Նուբարը գտնում էր, որ այդ սկզբունքով կազմված ծրագիրը ընդունելի կլինի միջազգային իրավունքի տեսակետից<sup>1</sup>:

Կ. Պոլսում պատրիարքարանը քննարկեց պատվիրակության ծրագիրը և անընդունելի համարեց: Կ. Պոլսի ռուսական դեսպանատունը նույնպես այն թերի համարեց: Պատրիարքարանը Նուբարին տեղեկացրեց նրա ծրագրի անհամապատասխանությունը արևմտահայերի իրական պահանջներին, սակայն վերջինս պատասխանեց, որ «պատրիարքարանը անձեռնիաս կերեւի միջազգային քաղաքական նման հարցերու քննութեան մեջ և առաջարկեց, որ կամ իրեն թողնվի հարցի լուծումը կամ ներկայացուցիչ ուղարկեն Փարիզ՝ համաձայնության գալու համար»<sup>2</sup>:

Փետրվարի կեսերին Փարիզ է մեկնում Վ. Փափազյանը: Նրա խնդիրն էր Նուբարին համոզել՝ ընդունելու պատրիարքարանի ծրագիրը, որն արտահայտում էր արևմտահայերի իրական ձգտումները<sup>3</sup>:

Պ. Նուբարն իր ծրագրի պաշտպանության համար պատրիարքարանի բանագնացին ներկայացրեց հետևյալ փաստարկները.

1. Չպետք է հայերի պահանջներին տալ ինքնավարության բնույթ, քանի որ բացի Ռուսաստանից ոչ մի տերություն դա չի պաշտպանի:

2. 1895թ. մայիսյան ծրագիրը պետք է դրվի իրենց նախագծի հիմքում, քանի որ այն ընդունված է թե՝ պետությունների, թե՝ թուրքերի կողմից:

3. Պետք է ընդիանուր կառավարիչը նշանակվի սուլթանի կողմից՝ պետությունների հավանությամբ, քանի որ Թուրքիան երբեք չի ընդունի տերությունների նշանակած կառավարչին:

4. Բարենորոգումները վերահսկելու են եվրոպական վեց տերությունները՝ ուղղակի կամ միջազգային հատուկ մարմնի միջոցով<sup>4</sup>:

Փափազյանը ներկայացրեց իր հակափաստարկները: Նրա կարծիքով. թեև պետք չէ ինքնավարության կերպարանք տալ հայկական պահանջներին, բայց արդեն իսկ

<sup>1</sup> Տես Պողոսյան Ս., ճշվ. աշխ., էջ 47:

<sup>2</sup> Տես նույն տեղում, էջ 50:

<sup>3</sup> Տես նույն տեղում, էջ 52:

<sup>4</sup> Տես Փափազյան Վ., ճշվ. աշխ., էջ 222:

անհրաժեշտ է ապահովել հայ ժողովրդի ապագա գոյության և զարգացման հիմքերը, քանի դեռ այդ ձգտումների համար նպաստավոր պայմաններ էին ստեղծվել:

Մեկուկես ամիս տևած բանակցությունների ընթացքում Պ. Նուբարը նահանջեց իր դիրքերից: Ի վերջո, համաձայնություն կայացավ գրեթե բոլոր կետերում: Նուբարը չընդունեց միայն ընդհանուր կառավարչի՝ պետությունների կողմից նշանակման կետը, քանի որ համոզված էր, որ Թուրքիան չի ընդունի այն<sup>1</sup>: Միացյալ ծրագիրն ուղարկվեց Կ. Պոլիս՝ պատրիարքարանի հաստատմանը: Որոշ ժամանակ անց պատրիարք Արշարունին Պ. Նուբարին տեղեկացրեց, որ իրենք ռուսական դեսպան Գիրսին են ներկայացրել ոչ թե միացյալ ծրագիրը, այլ՝ նախորդը: Այս փաստը բարկացրեց Նուբարին և լարվածություն առաջացրեց նրա և պատրիարքարանի հարաբերությունների մեջ: Ապրիլի 20-ին դարձյալ Կ. Պոլիս եկավ Փափազյանը համաձայնության եզր փնտրելու<sup>2</sup>:

Պ. Նուբարը կաթողիկոսին գրած նամակում հույս հայտնեց, որ վերջինս իր հեղինակությամբ պատրիարքարանին հետ կպահի վնասակար ընթացքից: Յակառակ դեպքում նա երկու ուղի էր տեսնում. կամ շարունակել բանակցությունները Եվրոպայում՝ առանց հաշվի առնելու պատրիարքարանի տեսակետները, կամ դադարեցնել իր գործունեությունը<sup>3</sup>: Սակայն լարվածությունը շուտով մեղմացավ: Պատրիարքարանը կազմեց նոր ծրագիր և ներկայացրեց ռուսական դեսպանությանը: Դա Նուբարի և Փափազյանի կազմած ծրագիրն էր՝ աննշան փոփոխություններով, որը ուղարկվեց Պետերբուրգ՝ ռուսական կառավարության հավանությունը ստանալու: Դրական պատասխան ստանալուց հետո և կաթողիկոսի կողմից հաստատվելուց հետո, այն պետք է պաշտոնապես հանձնվեր տերություններին<sup>4</sup>:

Յատկանշական է, որ քանի դեռ քննարկվում էր բարենորոգումների ծրագրի նախագիծը, Պ. Նուբարը շարունակում էր հանդիպումներն ու բանակցությունները Եվրոպական քաղաքական շրջանակների հետ: Յասարակական կարծիքը հօգուտ հայերի տրամադրելու նպատակով նա կազմակերպեց բանախոսություններ ու լրագրային հրապարակումներ, ինչպես նաև կազմեց հայասիրական կոմիտեներ՝ Փարիզում, Լոնդոնում, Բեռլինում և Շվեյցարիայում: Նուբարը գիտակցում էր մարդասիրական մղումներով կատարված դիմումների անօգուտ լինելը և իր դիմումները հիմնավորում էր տնտեսական ու քաղաքական փաստերով: Նա պայքարում էր ոչ միայն խոսքով, այլև՝ գրչով: Յայկական բարենորոգումների էությունը լուսաբանելու նպատակով դիվանագիտական աշխարհին ուղղեց վեց շրջաբերակամ<sup>5</sup>:

<sup>1</sup> Տես նույն տեղում, էջ 223:

<sup>2</sup> Տես նույն տեղը:

<sup>3</sup> Տես Փափազյան Վ., նշվ. աշխ., էջ 224:

<sup>4</sup> Տես Պողոսյան Ս., նշվ. աշխ., էջ 50:

<sup>5</sup> Տես Կարապետյան Մ., Յայաստանը 1912-1920 թվականներին, Երևան, 2003, էջ 16:

1913թ.-ի հուլիսին Ռուսաստանի նախաձեռնությամբ Կ.Պոլսում տեղի ունեցավ վեց պետությունների դեսպանությունների ներկայացուցիչների խորհրդաժողովը՝ նվիրված հայկական բարենորոգումների հարցին: Այստեղ ռուս-գերմանական քննարկումներն այնքան սրվեցին, որ կարող էին խափանել բանակցությունների ընթացքը, սակայն Լեփսիուսի ցուցումով Պ.Նուբարը մեկնեց Բեռլին հանդիպելու ԱԳ պետրեպարտամենտի կառավարիչ Ցիմերմանի հետ: Նա պարզաբանեց, որ հայերը միայն ձգտում են բարելավել իրենց վիճակը, և ինքնավարության կամ անջատողական ձգտումներ չունեն: Յակառակ դեպքում նա սպառնաց, որ հայերը ստիպված կլինեն բաժանման ձգտել<sup>1</sup>:

Ի վերջո 1914թ. հունվարի 26-ին ստորագրվեց հայկական բարենորոգումների մասին համաձայնագիրը<sup>2</sup>: Պ.Նուբարը 1912-14թ. անմնացորդ նվիրվեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու խնդրին: Իր լայն կապերի ու հետևողական քաղաքականության շնորհիվ մեծ տերություններից ու Օսմանյան կայսրությունից կարողացավ կորզել թեկուզն աննշան բարելավում բերող բարենորոգումների համաձայնագիր: Սակայն նրա երազանքները անիրագործելի մնացին Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելու և ծրագրից Թուրքիայի հրաժարվելու պատճառով:

Մարտի 3-ին Պ. Նուբարը վերադառնում է Կահիրե: Կիլիկիահայությանը փրկելու նպատակով նա 1914թ. նոյեմբերի սկզբին դիմում է Եգիպտոսի անգլիական իրամանատարությանը, որ զորք ուղարկեն՝ գրավելու Կիլիկիայի ծովեզերքը: Նա խոստանում է, որ լեռնագավառների հայերը կապստամբեն և կօժանդակեն դաշնակիցներին: 1915 թ. փետրվարի 3-ին Նուբարը «Պատերազմը և Կիլիկիայի հայերը» վերնագրով հուշագիր է ներկայացնում Եգիպտոսի անգլիական իշխանություններին<sup>3</sup>: Չնայած անգլիացիները սկզբում հետաքրքրվում են այդ առաջարկով, սակայն Կիլիկիայում ափհանում չի կատարվում: Նուբարը ստիպված էր բավարարվել հայ կամավորներին և գաղթականներին օգնություն ուղարկելով:

1915թ. ապրիլի 28-ին Նուբարը մեկնում է Եվրոպա: Նրա խնդիրն էր դիմել չեզոք պետություններին, որ նրանց միջամտությամբ դադարեցվեն հայկական կոտորածները, ինչպես նաև աշխատանքներ տանել Հայաստանի ինքնավարության համար<sup>4</sup>: Նա Փարիզ է ժամանում մայիսի 9-ին<sup>5</sup>: Նրան դիմավորում են Թիֆլիսի Ազգային բյուրոյի ներկայացուցիչ Յ. Զավրյանը: Միասին կազմում են ծրագիր, որով պետք է ստեղծվեր ինքնավար Հայաստան սուլթանի գերիշխանության ներքո և Եվրոպացի գեներալ-

<sup>1</sup> Տես Կարապետյան Մ., էջ 17:

<sup>2</sup> Տես Հայոց պատմություն, Երևան, 2012, էջ 440:

<sup>3</sup> Տես Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթղթերում, էջ 371:

<sup>4</sup> Տես նույն տեղում, էջ 372:

<sup>5</sup> Տես նույնը:

նահանգապետի գլխավորությամբ: Խնամակալությունը համատեղ իրականացնելու էին Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան: Հայաստանը ընդգրկելու էր Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները և Կիլիկիան՝ Մերսին նավահանգստով, իսկ Ալեքսանդրետը և Յունուրբալիքը դուրս էին թողնվում, որ խուսափեին Ֆրանսիայի և Անգլիայի ընդդիմությունից<sup>1</sup>: Այս ծրագիրն ընդունել տալու համար Նուբարը Փարիզում և Լոնդոնում հանդիպումներ է ունենում բարձրաստիճան քաղաքական գործիչների, դիվանագետների հետ, Աերկայացնում նյութեր, ուր ցույց է տալիս Անգլիայի և Ֆրանսիայի շահերը Հայաստանում: 1916թ. պարզ է դառնում, որ միացյալ Հայաստան ստեղծելն անհնար է, քանի որ Սայքս-Պիկո-Սազոնով համաձայնագրով պատերազմից հետո Վանի, Բիթլիսի, Երզումի և Տրավելոնի նահանգները անցնելու էին Ռուսաստանին, իսկ Սվազը, Խարբերդը, Դիարբեքիրը և Կիլիկիան՝ Ֆրանսիային<sup>2</sup>: Պ. Նուբարը կարծում էր, որ ինքնավար Հայաստանը պետք է գտնվեր Դաշնակից երկրների ընդհանուր հովանու Աերքո, իսկ նրանցից մեկը պետք է 10-15 տարով ստանձներ Հայաստանի մանդատը՝ նպաստելու երկրի վերակառուցմանը և պաշտպանելու արտաքին հարձակումներից: Այդ ոգով էր խմբագրված Պ.Նուբարի 1917թ. մայիսի 24-ի հուշագիրը դաշնակիցներին՝ վերնագրված «Հուշաթերթ հայկական հարցի և Հայաստանի ազատագրման» վերաբերյալ<sup>3</sup>:

Եվ երբ հունվարի 20-ին Պ. Նուբարը դիմում է ԱՄՆ-ի նախագահին, որ հայ պատվիրակները ևս մասնակցեն խաղաղության կոնֆերանսին, Վիլսոնը հունվարի 23-ին ուղարկված նամակում պատասխանում է, որ «հայոց տեսակետը իրենց ամբողջության մեջ նկատի պիտի առնեն, այնպես, ինչպես եթե անոնք պատվիրակություն ունենային խորհրդաժողովի մեջ»<sup>4</sup>:

Այսպիսին էր իրավիճակը, երբ կաթողիկոսի 1918թ. դեկտեմբերի 4-ին ուղարկած նամակից Պ.Նուբարը տեղեկանում է ՀՀ կողմից Փարիզ ուղարկված պատվիրակության մասին՝ Ավետիս Ահարոնյանի նախագահությամբ, Համո Օհանջանյանի և Միքայել Պապաջանյանի մասնակցությամբ<sup>5</sup>:

Երկու պատվիրակություններից միացյալ պատվիրակություն ստեղծելը սկզբից նեթ բացառվեց, քանի որ առանցքային մի շարք հարցերում լուրջ տարակարծություններ առաջացան նրանց միջև:

Իր գործունեությամբ համազգային բնույթ տալու և ազգային պահանջների ծրագիր կազմելու նպատակով Պ. Նուբարը Փարիզում իրավիրեց Ազգային համագումար, որն իր աշխատանքները սկսեց 1919թ. փետրվարի 18-ին: Այն ունեցավ 43

<sup>1</sup> Տես Հայաստանը միջազգային դիվանագիտության փաստաթրերում, էջ 374:

<sup>2</sup> Տես նույն տեղում, էջ 374:

<sup>3</sup> Նույն տեղում էջ 428-430:

<sup>4</sup> Տես Փափազյան Վ., նշվ. աշխ., էջ 307:

<sup>5</sup> Տես Վրացյան Ս., Կեանքի ուղիներով դեպքեր, դեմքեր, ապրումներ, հ. Ե, Թեյրութ, 1966, էջ 45:

նիստ և փակվեց ապրիլի 22-ին<sup>1</sup>: Համագումարին խորհրդակցական ծայնի իրավունքով մասնակցեցին 5 անձինք՝ Ազգային պատվիրակության կողմից և ՀՀ պատվիրակության անդամները: Ահարոնյանը և Օհանջանյանը իրաժարվեցին ծայնի իրավունքով մասնակցել համագումարին՝ նշելով, որ լիազորված են մասնակցել միայն հաշտության վեհաժողովին: Համագումարում քննարկվեց մանդատ վերցնելու հարցը: Նշվեց, որ բացի ԱՄՆ-ից, եթե մյուս պետությունները վերցնեն մանդատը, ապա Հայաստանը գաղութի կվերածեն<sup>2</sup>: Համագումարը վավերացրեց վեհաժողովին ներկայացված հայկական պահանջների ծրագիրը, ճշտեց հայության նյութական վճասների չափը, ընտրեց նոր պատվիրակություն: Այն հանձնարարեց երկու պատվիրակություններին լուժել Միացյալ կառավարության և խորհրդարան կազմելու հարցը, բայց այդպես էլ չկարողացավ համաձայնության գալ: Ահարոնյանը առաջարկեց ընտրել 3 պատվիրակ, որոնք միանալով ՀՀ 3 պատվիարակներին կկազմեին միացյալ պատվիրակություն: Նուրարը առաջարկեց արևմտահայ 4 պատվիրակ ընտրել, որ մեծամասնություն ունենա և կարողանա ազատորեն գործել: Ի վերջո, ընտրվեց նոր պատվիրակություն 6 անդամներով՝ Պ. Նուրարը՝ նախագահ, պրոֆեսոր Աբրահամյան, Տեր-Հակոբյան, Գարեգին Փաստրամաջյան, դոկտոր Յակոբ Ներսոսյան, Արշակ Չոպանյան և Վահան Թեքեյան: Հայկական հարցի հուշագրերը և դիմումները պետք է ստորագրվեին թե՛ Նուրարի, թե՛ Ահարոնյանի կողմից և առանց երկկողմանի համաձայնության որևէ քայլ չեին կատարելու<sup>3</sup>: Ցավոք վերջիններս չկարողացան համագործակցության եզրեր գտնել: ՀՀ կառավարությունը անկախության տարելիցի օրը՝ 1919թ. մայիսի 28-ին, հայտարարեց Հայաստանի միությունը և անկախությունը, որով Հայաստանի բաժանքաժամկետ միացած հոչակեց իբրև անկախ պետական միություն և իրեն հայտարարեց Միացյալ Հայաստանի կառավարություն<sup>4</sup>: Պ. Նուրարի դժգոհությունը մեծ եղավ, երբ տեղեկացավ, որ ՀՀ կառավարությունը իրեն հոչակել է ամբողջական Հայաստանի կառավարություն: Նա մտադիր էր հրապարակայնորեն բողոքել, եթե նույնիսկ Ազգային պատվիրակության մյուս անդամները չընկերանային իրեն: Պապաջանյանը այս փաստը բացատրում էր նրանով, որ Նուրարը գիտակցեց իր պատվիրակության գործունեությունը հարցականի տակ դրվելը: Յասկանալի է, որ Նուրարի բողոքը պառակտում կմտցներ ազգի մեջ, նորից մեջտեղ կգար արևելահայերի և արևմտահայերի խնդիրը, ինչպես նաև կթուլացներ հայերի դիրքերը միջազգային ասպարեզում: Ուստի ՀՀ պատվիրակության անդամները դժվարությամբ կարողացան Նուրարին հետ պահել այդ քայլից և համոզեցին պատվիրակություն ուղարկել Երևան՝ քննարկելու միացյալ կառավարության և խորհրդարան կազմելու հարցը:

<sup>1</sup> Տես նույն տեղում, էջ 278:

<sup>2</sup> Տես նույն տեղում, էջ 273:

<sup>3</sup> Տես նույն տեղում, էջ 280:

<sup>4</sup> Տես նույն տեղում, էջ 281:

Բանակցությունները Երևանում սկսվեցին հոկտեմբերի 29-ին և ավարտվեցին անարդյունք նոյեմբերի 16-ին: Վրացյանը բանակցությունների նման վախճանը բացատրում է միմյանց նկատմամբ եղած անվստահությամբ, քանի որ Նուբարի համար իրենք սոցիալիստներ ու հեղափոխականներ էին, իսկ ՀՀ պատվիրակների համար նուբարյանները միայն գաղութների ներկայացուցիչներ էին, որոնք ցանկանում էին իշխանության գալ<sup>1</sup>:

Շուտով՝ հունվարի 30-ին, Նուբարը տեղեկացնում է Խատիսյանին, որ ցանկանում է կառավարության հետ համաձայնություն կայացնել<sup>2</sup>: Նաև առաջարկեց հայտնել Ահարոնյանին պատվիրակությունների միացման մասին: Սակայն հարկ է նշել, որ իրավիճակը փոխվել էր: Հունվարի 19-ին Անտանտի գերագույն խորհուրդը դեֆակտո ճանաչել էր ՀՀ-ը և Հայկական հարցի լուծումը կապել հանրապետության հետ, որով ազգային պատվիրակության դիրքերը թուլացան<sup>3</sup>:

Օգոստոսի 14-ին Նուբարը բողոքի նոտա հղեց Խաղաղության վեհաժողովի նախագահ Միլերանին: Նա բողոքեց Կիլիկիան և Խաղբերդը թուրքերին թողնելու առթիվ, պահանջեց այդ տարածքները հանձնել Ֆրանսիայի հովանավորությանը: Սակայն վերջինիս բողոքի նոտան, բնականաբար, անուշադրության մատնվեց: Ֆրանսիան հաշվի չառավ հայերի դիմումներն ու խնդրանքները, մոռացավ իր տված խոստումները և հայկական այդ տարածքները զիջեց թուրքերին: Նուբարը մտադիր էր Կիլիկիա ուղարկել զորավար Անդրանիկին, որ կազմակերպեր տեղի հայկական ուժերը, քեմալականներից ազատագրեր Կիլիկիան ու մյուս տարածքները, սակայն Ֆրանսիան մերժեց Կիլիկիայում ազգային ուժեր կենտրոնացնելու Նուբարի ջանքերը: Նուբարը առաջարկում էր Կիլիկիայում ստեղծել ինքնավար քրիստոնյա վարչություն՝ Ֆրանսիայի հովանու ներքո և խառը ոստիկանություն՝ ֆրանսիացի սպաների հրամանատարությամբ: Ըստ նրա այդ լուծումը չէր հակասի Սևրի դաշնագրին:

1921թ. փետրվարի 26-ին Նուբարն ու Ահարոնյանը Լոնդոնի խորհրդաժողովից պահանջեցին Սևրի պայմանագրի գործադրությունը Հայաստանում: Մարտի 4-ին Լոնդոնի խորհրդաժողովը որոշեց փոփոխություններ մտցնել Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող մասում և առաջարկեց Թուրքիայի արևելյան տարածքներում կազմել հայկական «Ազգային տուն», որի սահմանները որոշվելու էր Ազգերի լիգայի հանձնաժողովը: Այդ համեստ ծրագիրը ևս չընդունվեց թուրքերի կողմից, և 1923թ. Լոզանի կոնֆերանսում Հայկական հարցի վրա տերությունները խաչ քաշեցին:

Այսպիսով, Պ.Նուբարը՝ հոգնած երկարատև անօգուտ պայքարից և բանակցություններից, հուսահատված հայ ժողովողի քաղաքական ծանր վիճակից ու

<sup>1</sup> Տես նոյն տեղում, էջ 282:

<sup>2</sup> Տես նոյն տեղում, էջ 283:

<sup>3</sup> Վրացյան Ա., Բանակցություններ ազգային պատվիրակության և Հայաստանի Հանրապետության միջև: Պոստոն, 1920, էջ 62-66:

Եվրոպական պետությունների ուխտադրուժ քաղաքականությունից, 1921թ. հուլիսին դուրս եկավ պատվիրակությունից ու նախագահի պաշտոնը հանձնեց Գ.Նորատունկյանին: Անկախ ամեն ինչից՝ նա Յայոց պատմության մեջ մտավ որպես հայ ժողովորդի 20-րդ դարի մեծագույն զավակներից մեկը, ով իր ողջ կյանքն ու գործը անմնացորդ նվիրաբերեց հայրենիքին ու հարազատ ժողովորդին:

**Лусине Айрапетова, Погос Нубар паша как руководитель армянской национальной делегации** - Статья включает деятельность армянского мецената, благодетеля и политика Погоса Нубара. Используя свои связи, Погос Нубар поднял Армянский вопрос в разных европейских инстанциях, пытаясь облегчить проблемы своего народа.

**Lusine Hayrapetova, Poghos Nubar pasha as head of the national delegation**, - The article includes the favourable activity of the Armenian millionaire, benefactor and politician Poghos Nubar. Using his ties, Poghos Nubar raised the Armenian question in different European instances, trying to make easy the hardships of his countrymen.

**Լուսինե Հայրապետովա - ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի նոր և նորագույն բաժնի հայցորդ:**